Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Дмитренко

Мистецтво

891.71
7--79

891.71
Դ-79
10 NOV 2011
25 SEP 2006

Հրատարակութիւն Գ. Գայստեանի։

ԱԶՆԻՒ ԳՈՂ

ՎԻՊԱԿ

Ֆ. Մ. ԴԱՍՏԱՅԵՎՍԿՈՒ

(Անծանօթի գրուածներից)

ԹԱՐԳՄ. Ն. Չ.

Тип. М. Вартанянца, Гановск. ул. № 3.
Տպ. Մ. Վարդանեանցի, Գանովսկ. փող. № 3.

04.04.2013

11993

Доз. Цензурою, Тифлисъ, 9 Декабря 1904 г.

4508-85

Մի առաւօտ, երբ արդէն բոլորովին պատրաստ էի ես գնալու պաշտօնատեղիս, յանկարծ սենեակս ներս մտաւ Ագրաֆենան, այսպէս էր իմ խոհարարուհուս անունը, որ միևնոյն ժամանակ լուացարար և տնտես կին էր տանս մէջ և, ո՞ զարմանք, սկսեց հեռս խօսել։

Մինչև այդ բոլէն նա մի այնպիսի լռակեաց, հասարակ, պարզ կին էր, որ բացի իւր սովորական ամենօրեայ երկու խօսքից՝ թէ ինչ պէտք է ճաշին պատրաստել, 6 տարուայ ընթացքում, համարեա, մի ուրիշ խօսք չէր ասել ինձ։ Գոնէ ես ուրիշ ոչինչ չէի լսել նրանից։

—Ահաւասիկ, ես քեզ մօտ եկայ, պարոն, սկսաւ նա յանկարծ,—վարձու չէ՞ք տալ փոքրիկ սենեակը։

—Ի՞նչ սենեակ։

—Այն որ խոհանոցին կից է։ Յայտնի բան է թէ ո՞րը։

—Ինչու՞ համար։

—Ինչու՞ համար։ Նրա համար, որ մարդիկ վարձով են տալիս տնկեցներին։ Յայտնի բան է թէ ինչու համար։

—Բայց ո՞վ է ուզում նրան վարձել։

—Ո՞վ է ուզում։ Տնկեցն է վարձում։ Յայտնի բան է թէ ով։

—Բայց այնտեղ, մայրիկս, անկողնակալ անգամ չի կարելի դնել, այնքան նեղ է, ուր մընաց թէ ապրել կարելի լինի։

—Ինչու՞ այնտեղ ապրել։ Միայն թէ քնելու տեղ լինի, իսկ նա պատուհանի վրայ կապրի։

—Ո՞ր պատուհանի վրայ։

—Յայտնի է թէ որ պատուհանի վրայ, կարծես թէ չըգիտէք։ Այն պատուհանի վրայ, որ նախասենեակումն է, նա այնտեղ կընստէ, կըկարէ կամ որևէ բան կանէ։ Գուցէ և աթոռի վրայ կընստէ։ Նա աթոռ էլ, սեղան էլ ունի, ամեն բան ունի։

—Ո՞վ է այդ մարդը։

—Մի լաւ, փորձուած մարդ է։ Ես նրա համար ճաշ պիտի պատրաստեմ։ Եւ սենեակի և ճաշի վարձ ընդամենը ամսական երեք ռուբլի պիտի ստանամ...

Վերջապէս ես, երկար ու բարակ ջանքերից յետոյ իմացայ, որ մի տարիքն առած մարդ Ագրաֆենային համոզել էր, որ առնի նրան խոհանոցը իբրև տնկեց։ Ինչոր Ագրաֆենայի գլուխը մտնէր, գիտէի որ այն անպատճառ պիտի կատարուէր. այլապէս նա ինձ հանդիստ չէր տալ։ Այն դիպուածներում, երբ որևէ բան նրա սրտով չէր լինում, նա իսկոյն մատանջութեան և մելամաղձութեան մէջն էր ընկնում, և այդպիսի հոգեկան դրութիւնը տևում էր երկու երեք

շաբաթ։ Այս միջոցին կերակուրը լաւ չէր եփւում, սպիտակեղէնը կորչում էր, յատակները չէին լուացւում, մի խօսքով՝ շատ անհաճոյ բաներ էին պատահում։ Ես վաղուց նկատել էի, որ այս անխօս արարածը անկարող էր լինում որևէ վճիռ կայացնել, կանգ առնել իւր սեպհական մտքի վրայ։ Բայց եթէ նրա տակը ուղեղում պատահաբար մի որևէ բան ընկնէր, որ նման էր մի գաղափարի կամ մի ձեռնարկութեան, այլ ևս անկարելի էր մերժել նրա իրագործումն, այլապէս նշանակում էր մի քանի ժամանակ սպանել նրան բարոյապէս։ Ուստի ամենից աւելի յարգելով անձնական հանգստութիւնս, ես իսկոյն համաձայնուեցայ։

—Բայց ունի՞ նա, գոնէ, անցաթուղթ, կամ նրա պէս մի բան։

— Ի հարկէ ունի։ Մի լաւ, փորձուած մարդ է. երեք ռուբլի խոստացաւ տալ։

Միւս օրը, իմ համեստ և միայնակեցի բնակարանում նոր տնկեց երևաց, բայց ես չէի տհաճում, մինչև անգամ ուրախ էլ էի։ Ես առհասարակ ապրում եմ միայնակ, կատարեալ մի բանտարկեալ։ Ծանօթներ համարեա թէ չունիմ. տանից դուրս եմ գնում շատ հազիւ։ Տասը տարի միայնակ ապրելով, ի հարկէ, սիրեցի միայնակեցութիւնը։ Բայց տասը, տասն և հինգ տարի, գուցէ և աւելի տևող մի այդպիսի միայնակեցութիւն, նոյն Ագրաֆենայի հետ, նոյն ամուրի մարդու բնակարանում, դա բաւական ժժգոյն պատ-

կեր էր։ Ուստի մի աւելորդ, խաղաղակեաց մարդ, այդպիսի հանգամանքներում — մի կատարեալ գանձ էր ինձ համար։

Ագրաֆենան չէր ստել. իմ ընկեցն աշխարհ տեսած մարդիկներից մէկն էր։ Անցաթղթին նայելով, երևաց, որ արձակուրդ տուած զինուորներից մէկն էր, որ իմացայ առանց անցաթղթին էլ նայելու, հէնց առաջին հայեացքից, դէմքին նայելով։ Այս հեշտ է իմանալ։ Աստաֆի Իվանիչը, այսպէս էր իմ ընկեցի անունը և հօր անունը, իւր նմանների մէջ լաւերիցն էր։ Մենք լաւ էինք ապրում։ Բայց ամենալաւն այն էր, որ Աստաֆի Իվանիչը երբեմն երբեմն պատմում էր պատմութիւններ, դէպքեր իւր կեանքից։ Իմ անվերջանալի ձանձրութեան ժամերին մի այդպիսի պատմիչը կատարեալ գանձ էր։ Մի անգամ նա ինձ պատմեց իւր պատմութիւններից մէկը։ Այդ պատմութիւնը ինձ վրայ տպաւորութիւն թողեց։ Եւ ահաւասիկ ասեմ թէ ինչ առիթով ընկաւեց պատմութիւնը։

Մի անգամ սենեակումս միայնակ մնացի, և Աստաֆին և Ագրաֆենան գործով ուրիշ տեղ էին գնացել։ Յանկարծ ես լսեցի երկրորդ սենեակից, որ մի մարդ ներս մտաւ սենեակը և ինձ թուաց թէ դա մի օտարական է. ես դուրս գնացի. և իրաւ, նախասենեակում կանգնել էր մի սերտուկաւոր օտար, կարճահասակ մարդ, չընայելով որ աշնանային, ցուրտ եղանակ էր։

—Ի՞նչ ես ուզում։

—Պաշտօնեայ (չինովնիկ) Ալէքսանդրովին, այստեղ է կենում։

—Մի այդպիսի մարդ չըկայ, եղբայր. մնաս բարեաւ։

—Ինչպէս թէ չըկայ, դռնապահը ասաց, որ այստեղ է, մռմռաց այցելողը զգուշութեամբ հեռանալով դէպի դռները։

—Հեռացիր, հեռացիր, եղբայր. գնա։

Միւս օրը ճաշից յետոյ, երբ Աստաֆի Իվանովիչը իմ սերտուկն էր ինձ վրայ չափում վերանորոգելու նպատակով, նորից ով որ ներս մտաւ նախասենեակը։ Ես բացի դուռը։

Երեկուայ պարոնը, հէնց իմ աչքի առաջ, հանգստութեամբ վեր առաւ իմ վերարկուս կախարանից, կռնատակն առաւ և հեռացաւ բնակարանից։ Ագրաֆենան բոլոր ժամանակ նրան էր նայում, զարմանքից բերանը բաց մնաց և ուրիշ ոչինչ չ՚արաւ վերարկուս աղատելու համար։ Աստաֆի Իվանիչը վազեց խաբեբայի ետևից և 10 բոպէից յետոյ վերադարձաւ հեռելով և ձեռնունայն։ Կորել գնացել էր մարդը։

—Այո, անյաջողութիւն, Աստաֆի Իվանիչ։ Էլի լաւ է որ մեծ վերարկուն (շինելը—шинель) մեզ մնաց։ Ապա թէ ոչ մեզ բոլորովին կամաչացնէր խաբեբան։

Բայց Աստաֆի Իվանիչի զարմանքը այնքան մեծ էր, որ ես մինչև անգամ մոռացայ կորստի մասին, նայելով նրան։ Նա իրեն բոլորովին կորցրել էր։ Շուտ շուտ դէն էր ձգում գործը, ա-

մեն բոպէ նորից էր ուզում պատմել դէպքը, թէ ինչպէս էր այս պատահել, ինչպէս նա կանգնել էր այստեղ, ինչպէս էին վերցրել, երկու քայլ հեռաւորութեան վրայ, երեն աչքի առաջ փոքր վերարկուն (բեկեշ—бекешь), և ինչպէս էր այս բոլոր այնպէս շուտ կատարուել, որ գողին բռնել անկարելի էր եղել։ Յետոյ նորից նստեց աշխատելու, յետոյ էլի դէն ձգեց աշխատանքը, և ես տեսայ որ վերջապէս գնաց դռնապանի մօտ և նախատեց, որ թոյլ է տալիս գողութիւն։ Յետոյ վերադարձաւ և սկսեց հայհոյել Ագրաֆենային։ Յետոյ նորից նստեց աշխատելու և երկար մտմտաց ինքն իրեն, թէ ինչպէս էր այս բոլորը կատարուել, թէ ինչպէս գողն այնտեղ կանգնած էր, իսկ ինքն այստեղ, և թէ ինչպէս երկու քայլ հեռու, իւր աչքի առաջ գողացան բեկեշը և այլն և այլն։ Մի խօսքով Աստաֆի Իվանիչը թէև բան չինել գիտէր, բայց չափազանց հոգատար և մանրաշահ մի մարդ էր։

—Մեզ յիմարացրին, Աստաֆի Իվանիչ,—ասեցի ես նրան մի երեկոյ, մի բաժակ թէյ տալով նրան, և ցանկացայ ձանձրոյթս ցրելու նպատակով նորից պատմել տալ վերարկուի գողութեան դէպքը, որի պատմութիւնը յաճախակի կրկնուելուց և պատմիչի խորին անկեղծութիւնից շատ ծաղրական էր դառնում։

—Յիմարացրին, պարոն։ Շատ ցաւում եմ, թէև հաղուստը իմս չէ։ Իմ կարծիքով գողից աւելի զզրելի արարած չկայ աշխարհիս երեսին։ Շատերը գոնէ ձրիաբար են վերցնում, իսկ այսպիսի մէկը քո աշխատանքը, քո թափած քրտինքն է քեզանից գողանում։ Ա՜խ, ինչ վատ բան, թիւ. խօսել անգամ չեմ ուզում, զայրոյթս բռնում է։ Ախ, պարոն, ինչպէս չէք ցաւում, երբ բարիքը...

—Այո, այնպէս է, Աստաֆի Իվանիչ, աւելի լաւ է որ իրդ այրուի, քան գողը տանէ, ցաւալի է, շատ ցաւալի։

—Էլ ինչ ասել կուզէ. ի հարկէ, գող էլ կայ, գող էլ... Պարոն, մի անգամ ինձ հետ մի դէպք պատահեց, այնպէս որ մի ազնիւ գողի էլ հանդիպեցի։

—Ի՞նչպէս թէ ազնիւ։ Ո՞ր գողն է ազնիւ, Աստաֆի Իվանիչ։

—Այո, պարոն, ճիշտ էք ասում։ Ո՞ր գողն է ազնիւ և այդպիսի գող չկայ։ Միայն ես ուզեցի ասել, որ, կարծես, ազնիւ մարդ էր, բայց գողացաւ։ Պարզն ասած, ցաւալի էր նա։

—Ինչպէ՞ս պատահեց այդ, Աստաֆի Իվանիչ։

—«Այս դէպքը սրանից երկու տարի առաջ պատահեց, պարոն։ Այն ժամանակ ես մօտ մի տարի անպաշտօն էի մնացել, և իմ այդ պաշտօնավարութեան վերջին օրերին ծանօթացաւ հետս բոլորովին կորած մի մարդ։ Օդեսան մէջ ծանօթացանք։ Գինեմոլի մէկն էր, թափառաշրջիկ և ձրիակեր, առաջ մի ինչ որ տեղ ծառայել էր և վռնդուց նրան իւր գինեմոլութեան համար պաշտօնից արձակել էին։ Այնպիսի անարժանի

մէկն։ Եւ Աստուած գիտէ թէ ինչ շորերով էր
ման գալիս։ Հագի շապիկն անգամ տանում խը-
մում էր։ Բայց կռուարար չէր. ընաւորութեամբ
խաղաղասէր էր, հեզաբարոյ և բարեսիրտ, խընդ-
ղրել անգամ չէր համարձակւում, ամաչում
էր, ինքդ վերջապէս տեսնում ես, որ խղճուկը
խմել է ուզում և խմացնում ես։ Այսպէս անա
ես նրա հետ ծանօթացայ, կամ ասենք, նա ինձ
մօտեցաւ... Ինձ համար ոչինչ։ Եւ ինչ տե-
սակ մարդ էր։ Շան պէս պուկ չէր գալիս ինձ-
նից—ուր էլ գնում էիր, նա հետդ էր գալիս, իսկ
ընդամենը մի անգամ միայն տեսել էինք իրար։ Նախ
և առաջ խնդրեց թոյլ տալ մի գիշեր անցկացնել
իմ տանս. թողեցի, տեսայ անցաթուղթը կարգին
է, մարդն էլ ոչինչ, մարդու նման է։ Յետոյ
երկրորդ օրուայ համար խնդրեց, նոյնպէս թողե-
ցի, յետոյ երրորդ օրն եկաւ, ամբողջ օրը պա-
տուհանի վրայ նստած անցկացրեց և գիշերն էլ
մնաց։ Մտածեցի, այ ես էլ մարդ գտայ, հա. ու-
տեցրու խմեցրու և դեռ քնելու էլ թող տանդ.
ինչ կըլինի խեղճ մարդու հալը, երբ մի սեղա-
նակից էլ վրան աւելանում է։ Իսկ առաջ,
ինչպէս հիմա իմ տուն, մի ծառայողի տունն էր
գնում, պուկ չէր գալիս նրանից. միասին էին
կոնծում, բայց նա, ծառայողը խմելու չափը ան-
ցկացրեց և մեռաւ մի ինչ որ վշտից։ Իսկ սրան
անուանում էին Եմելէյ, Եմելեան Իլիչ։Շատ մտա-
ծեցի թէ ինչպէս վարուեմ հետը։ Դուրս վռնդել
նրան ցաւում էի, շատ էի ցաւում. այնպիսի մի

թշուառական, կորած արարած էր, որ էլ չի կա-
րելի ասել։ Եւ մի այնպիսի անլեզու. նա չէր
խնդրում, եթէ մի բանի պահանջ ունէր. նստում
էր իրեն համար և ինչպէս շուն աչքերիդ էր նա-
յում։ Անա թէ ինչպէս կարող է արբեցողութիւ-
նը մարդուն փչացնել։ Մտածում եմ ես՝ թէ
ինչպէս ասեմ, հեռացիր այստեղից, սիրելի Ե-
մելիան, ինձ մօտ ոչինչ չըկայ անելու, քո տեղդ
չէ. շուտով ես ինքս էլ ուտելու ոչինչ չեմ ու-
նենալ, ինչպէս քեզ էլ պահեմ։ Նստած մտածում
եմ թէ ինչ կանէ նա, եթէ մի այդպիսի բան
նրան ասեմ։ Եւ ինքս կարծես նախատեսնում եմ,
թէ որքան երկար պիտի նայէր ինձ, երբ խօս-
քերս լսէր, որքան երկար պիտի նստէր նա և
չըպիտի հասկանար ոչ մի խօսք. յետոյ ինչպէս,
ճարը կտրած, պատուհանից պիտի վեր կենար,
վեր առնէր իւր կապոցը, իւր վանդակաւոր,
կարմիր, ծակոտկէն կապոցը, որի մէջ Աստուած
գիտէ թէ ինչ էր փաթաթում և ամեն տեղ իւր
հետ տանում, ինչպէս պիտի սրբէր մաքրէր իւր
վերարկուն այնպէս, որ և վայելուչ և տաք լի-
նէր և ծակերն էլ չընկատուէին — քնքոյշ
մարդ էր. ինչպէս պիտի յետոյ բաց անէր դու-
ռը և արտասուաթոր աչքերով դուրս գնար դէ-
պի սանդուղքը։ Դեհ, մտածում էի, մարդը խօ
չըպիտի կորչի, ոչնչանայ... սիրտս ցաւում էր։
Յետոյ մտածում եմ, հապա, խիղճս ինչ պիտի
ասի։ Սպասիր, սիրելի Եմելիան, դատում եմ ինքս
ինձ՝ երկար չի տևի քո կենակցութիւնը ինձ հետ,

ահա շուտով ուրիշ տեղ կերթամ և ինձ այլ ևս չես գտնիլ։ Այսպէս մենք գնացինք. այն ժամանակ դեռ Ալէքսանդր Ֆիլիմոնովիչը, պարոնս (այժմ հանգուցեալ, Աստուած ողորմի նրա հոգուն) ասում էր՝ քեզնից շատ շնորհակալ եմ, Աստաֆի, երբ ամենքս գիւղից կըվերադառնանք, քեզ չենք մոռանալ. նորից քեզ կըվերցնենք։ Իսկ ես այն ժամանակ տան ծառայ էի նրանց մօտ, շատ բարի մարդ էր պարոնս և վախճանուեցաւ միևնոյն տարին։ Ապա երբ նրան ճանապարհ դրինք, վերցրի ունեցած չունեցածս, նոյնպէս մօտս եղած փողս և մտածեցի այժմ թող հանգիստ վայելեմ և գնացի մի պառաւ կնոջ մօտ և մի անկիւն վարձեցի նրա մօտ։ Եւ նրա մօտ մի ազատ անկիւն կար միայն։ Այս պառաւը նոյնպէս առաջ ծծմայր էր եղած մի ինչ որ տեղում, այժմ առանձնակի էր ապրում, կենսաթոշակ էր ստանում։ Մտածում եմ, մնաս բարեաւ այժմ, սիրելի Եմելիան, բարեկամս, էլ չես գտնիլ ինձ։ Ի՞նչ էք կարծում, պարո՛ն։ Տուն վերադարձայ երեկոյեան (ծանօթ մարդուն այցելութիւն էի գնացել) ամենից առաջ Եմելիային տեսայ, որ սենեակումս իմ արկղի (սունդուկ— сундукъ) վրայ իւր վերարկուով նստած և վանդակաւոր կապոցը կողքին ինձ էր սպասում... և ձանձրոյթն էլ փարատելու համար մի ինչ որ եկեղեցական գիրք պառաւից վեր առնելով գլխի վայր (թարս) ձեռքին բռնել էր։ Գտել էր էլի. ա՜յ բան, մտածեցի ես ու ճա-

ըրս կտրուեց։ Մտածում եմ, դէ՛հ, հիմա ինչ արած, ի զուր սկզբից դուրս չարի նրան։ Ուստի ուղղակի և նրան հարցնում եմ. «Անցաթուղթըդ բերիր, Եմելիա»։

«Ես այդտեղ նստեցի, իմ պարոն, և մտածութեան մէջ ընկայ. ինչ անեմ, թափառաշրջիկ մարդ է, մեծ արգելք կըլինի՛ նա ինձ։ Եւ երկար մտածելուց յետոյ վճռեցի, որ մեծ արգելք չի լինի նա ինձ։ Ուտել խմել կուզէ նա, մտածում էի։ Առաւօտը մի կտոր հաց, վրան էլ, որ աւելի համեղ լինի, մի կտոր էլ սոխ—ահա բոլորը։ Կէսօրին նոյնպէս սոխ ու հաց, երեկոյեան սոխ ու կվաս և հաց, եթէ հաց ուզեց. իսկ եթէ շչի էլ ունենանք, այն ժամանակ երկուսս էլ կուշտ կուտենք։ Ես ինքս շատ չեմ ուտում, իսկ խմող մարդը, յայտնի է, որ ոչինչ չի ուտում, նրա համար բաւական է միայն օղին. խմելու կողմից, մտածում էի ես, նա հոգիս պիտի հանէր, բայց և իսկոյն մի ուրիշ բան միտքս ընկաւ, և մի լաւ բան, որ եթէ Եմելիան հեռանար, ապրել չէի ուզիլ ես... վճռեցի նրա բարերար հայրը դառնալ։ Կազատեմ նրան անխուսափելի կործանումից, մտածեցի ես, օղի խմելը մոռացնել կըտամ։ Կաց դու դեռ, մտածում էի. դէ՛ լաւ, Եմելիա, մնացի՛ր մօտս, միայն քեզ պահի՛ր և հրամաններս լսիր»։

«Ահա և ես ինքս ինձ մտածում եմ. կըսկսեմ նրան այժմ որևէ աշխատանքի ընտելացնել, միայն ոչ միանգամից. թող առաջ զբօսնէ մի փոքր, իսկ

այդ միջոցին կաշխատեմ նրա համար մի այնպիսի գործ գտնել, որին ընդունակ կարող է լինել Եմելիան, ըստ որում ամենից առաջ, պարոն, իւրաքանչիւր գործի համար ընդունակութիւն է հարկաւոր։ Ես սկսեցի ծածուկ հետևել նրան։ Մտածում եմ՝ կատաղի մարդ ես, սիրելի Եմելիաս։ Սկսեցի ամենից առաջ խրատներից. այսպէս թէ այնպէս, ասում եմ Եմելիան Իլիչ, նայէիր քեզ թէ ինչ օրն ես ընկել և աշխատէիր քեզ ուղղել։

«—Բաւական է խմել, ասում եմ ես նրան։ Նայէր, տես ինչ ունիս հագիդ, վերարկուդ, նեբիր ասել, մաղի է նման, ամօթ է։ Ժամանակ է կարծեմ, որ պատիւդ ճանաչես։ Գլխակոր նըստած լսում է ինձ Եմելիան։ Եւ ինչ, պարոն։ Այն դրութեան էր հասել, որ արբեցողութիւնից լեզուն կորցրել էր, օրինաւոր խօսք ասել չէր կարողանում։ Ասում էիր անձ, նա պատասխանում էր գանձ։ Ինձ ականջ էր դնում, երկար ժամանակ ականջ դնում, յետոյ հառաչում։ Ինչու՞ ես հառաչում, Եմելիան Իլիչ, հարցնում եմ ես։

«—Այնպէս, ոչինչ, Աստաֆի Իվանիչ. մեք անհանգստանալ։ Այսօր երկու կին, Աստաֆի Իվանիչ, փողոցում կռուեցան. մէկը միւսի կլիուկվայի (клюква—Ռուսիայի մի տեսակ թթուաշ պտուղ) ամանը անզգուշութիւնից գետին վեր ածեց։

«—Դեհ, լաւ ինչ։

«—Միւսն էլ նրա փոխարէն դիտմամբ նրա ամանը թափեց և ոտով էլ դեռ կոխճռտեց։

«—Դեհ, լաւ ինչ, Եմելիան Իլիչ։

«—Ոչինչ, Աստաֆի Իվանիչ, ես միայն այնպէս ասացի։

«—Ոչինչ, միայն այնպէս։ Էհէ... մտածում եմ, Եմելիա, դու իմ Եմելիա, գլուխդ խմելուց կորցրել ես...

«—Էլի մի պարոն թուղթ փող վայր ձգեց Գօրօխովոյի փողոցի վրայ, չէ, կարծեմ, Սադովոյի փողոցի վրայ։ Իսկ մի ռամիկ տեսաւ և ասաց իմ բաղդս է, մի ուրիշն էլ տեսաւ, ասաց, չէ, իմ բաղդս է։ Ես քեզնից առաջ տեսայ...

«—Է՜հ, Եմելիան Իլիչ։

«—Եւ կռուեցան ռամիկները, Աստաֆի Իվանիչ։ Իսկ քաղաքապահ զինուորը մօտեցաւ, վերցրեց թուղթ փողը և տուաւ պարոնին, իսկ երկու ռամիկին սպառնաց բանտը ձգել։

«—Լաւ, թէ ինչ։ Ինչ մի խրատական բան կայ այդ տեղ, սիրելի Եմելիան։

«—Ես ոչինչ։ Ժողովուրդը ծիծաղեց, Աստաֆի Իվանիչ։

«—Է՜հ, սիրելի Եմելիաս։ Ժողովուրդը։ Հոգիդ երեք կոպէկով ես ծախել։ Գիտես ինչ կասեմ քեզ, Եմելիան Իլիչ։

«—Ի՞նչ կասես, Աստաֆի Իվանիչ։

«—Մի գործ շինիր, ուղիղն եմ ասում։ Հազար անգամ եմ ասել մի գործ շինիր, խղճա քեզ։

«—Ի՞նչ գործ շինեմ, Աստաֆի Իվանիչ։ Ես

ենքս չըգիտեմ ինչ գործ չինեմ, և ինձ էլ ոչ ոք չի վերցնիլ, Աստաֆի Իվանիչ։

«—Այն պատճառով էլ քեզ ծառայութիւնից արձակեցին, Եմելիան, որովհետև խմող մարդ ես։

«—Հապա Վլաս բուֆետչիկին էլ այսօր գրասենեակը կանչեցին, Աստաֆի Իվանիչ։

«—Ինչի համար, ասում եմ ես, կանչեցին նրան, սիրելի Եմելիան։

«—Ա՛յ այդ չըգիտեմ թէ ինչի համար կանչեցին, Աստաֆի Իվանիչ։ Նշանակում է այնտեղ այդ հարկաւոր էր, որ նրան կանչեցին։

«Է՜հ, մտածում եմ, երկուսս էլ, քեզ հետ միասին, սիրելի Եմելիան, կորած ենք մենք։ Մեր մեղքերի համար Աստուած մեզ պատժում է։ Ի՜նչ պիտի անենք այդպիսի մի մարդու հետ։

«Միայն շատ խորամանկ տղայ էր նա, էլ ասել պէտք չէ։ Լսում էր լսում ինձ, և յետոյ, երբ արդէն ձանձրանում, իմ զայրոյթը տեսնելուն պէս, իսկոյն վերցնում էր վերարկուն և պուկ կորչում—հետքը չէիր գտնիլ։ Մի ամբողջ օր թափառում էր, երեկոյեան գալիս էր արդէն հարբած։ Ո՞վ էր խմացնում, ո՞րտեղից էր փող գտնում, Աստուած միայն գիտէր, միայն այդ բանում ես մեղաւոր չէի։

«—Չէ, ասում եմ, Եմելիան Իլիչ, գլխիդ մի փորձանք կըգայ, Եմելիա Իլիչ։ Բաւական է խըմել, լսում ես, բաւական է։ Միւս անգամ եթէ հարբած կըգաս, սանդուղքների վրայ կըքնես։ Տուն չեմ թողնիլ...

«Սպառնանքս լսելով, Եմելիանը տանը նստած մնաց մի օր, երկու օր, իսկ երրորդ օրը նորից անյայտացաւ։ Սպասում սպասում եմ, չի գալիս։ Արդէն ես, ճիշտն ասած՝ վախեցայ և շատ էլ խղճացի։ Ի՞նչ արեցի ես նրան, մտածում եմ։ Վախեցրի ես նրան։ Ո՞ւր գնաց այժմ ողորմելին։ Աստուած իմ, կարծեմ, կըկորչի նա։ Օրը մթնեց, նա չըվերադարձաւ։ Առաւօտեան ես դուրս գնացի նախագաւիթը և տեսայ, որ նախագաւթումն է քնած։ Սանդուղքի աստիճանի վրայ գլուխն է դրել և պառկել, ցըրտից բոլորովին սառել էր խեղճը։

«—Այդ ինչ է, Եմելիա, Տէր ընդ քեզ, այդ ո՞ւր ես ընկել։

«—Դուք, Աստաֆի Իվանիչ, այս օրերումս ինձ վրայ բարկացաք, վշտացաք և խոստացաք նախագաւթում պառկեցնել ինձ, ուստի և ես չըհամարձակուեցայ ներս մտնել, Աստաֆի Իվանիչ, և այստեղ պառկեցի...

«Բարկութիւնս և գթասրտութիւնս միանգամից զարթեցան։

«—Դու, Եմելիան, գոնէ մի ուրիշ պաշտօն կատարէիր, ասում եմ ես, ինչ ես սանդուղքի պահապան դառել։

«—Է՛լ ինչ ուրիշ պաշտօն, Աստաֆի Իվանիչ։

«—Գոնէ, կորած հոգի, ասում եմ ես (հերսս բռնեց) դերձակի արհեստանոցումը։ Տես ինչ հալումն է վերարկուդ։ Բաւական չէ, որ բոլորը ծակծկուած է, դեռ նրանով սանդուղքն էլ ես

ՀՍՍՀ ԳՐԱԿԱՆ ՊԱԼԱՏ
ZUUH ԱՄՍՍՀ
Մ. Մասնիկյան անվան

մաքրում։ Վեր առնէիր ասեղը և ծակերը կարէիր, այդպէս է հրամայում մարդու պատիւը։ Է՜յ, դու արբեցող մարդ։

«—Եւ ինչ, պարոն։ Վեր առաւ ասեղը. բայց ես ծաղրի համար ասացի, իսկ նա վախեցաւ և ասեղն առաւ ձեռքը։ Հանեց վերարկուն և սկսեց թելը ասեղում անցկացնել։ Նայում եմ ես վրան. յայտնի բան է, աչքերը ճպռոտուեցան, կարմրեցան, ձեռքերը դողդղացին, էլ ասել չի լինիլ թէ ինչպէ՜ս. թելը գցում էր գցում, չէր կարողանում ասեղում անցկացնել, որքա՜ն նա ակնթարթ նայեց, որքա՜ն նա և թքով քսեց թելին և ձեռքով ոլորեց նրան — ոչի՜նչ չօգնեց. վերջը դէն ձգեց ասեղն ու թելը ու սկսեց վրաս նայել…

—Դէ, Եմելիա, ամաչացրիր ինձ. եթէ ուրիշների մօտ անէիր, գլուխս կըկտրէի։ Ախր, ես քեզ, այդպիսի պարզամիտ մարդուն ծիծաղի համար ասացի… Դէ հեռացի՛ր գնա. Տէ՛ր ընդ քեզ։ Նստի՛ր այնպէս և ամօթալի բաներ մի՛ արա, սանդուղքների վրայ մի՛ քնիր, ինձ մի՛ ամաչացրու…

«—Լա՛ւ, ինչ անեմ ես, Աստա՛ֆի Իվանիչ. ես ինքս էլ լաւ գիտեմ որ միշտ հարբած եմ լինում և ոչ մի բանի պէտք չեմ… միայն ձեզ իմ բա… բարերարին վշտացնում չարացնում եմ…

«Եւ ինչպէ՜ս յանկարծ դողացին նրա կապտած շրթունքները, ինչպէ՜ս մի կաթիլ արտասուք երևաց նրա սպիտակ թշի վրայ, ինչպէ՜ս այդ արտասուքը դողդղաց նրա չածիլած

մորուսի վրայ, և ինչպէ՜ս վերջը հըպահելով իրան, հեղեղի պէս դուրս թափուեցին Եմելիանի աչքերից արտասուքները… Աստուա՜ծ իմ։ Կարծես դանակով մորթեցին սիրտս, այնպէս զգացի ինձ։

«—Է՜յ դուն զգայուն մարդ ես եղել, բոլորովին չէի կարծում այդ։ Ո՞վ գիտէր, ո՞վ կարող էր գուշակել այդ… Զէ, մտածում եմ, քեզնից բոլորովին կըհրաժարուեմ, Եմելիա. ոչնչացի՛ր ինչպէս մի հին բան։

«Է՜հ, պարոն, էլ ինչ երկարացնեմ։ Եւ իրը այնքան չնչին, աննշան է, որ խօսել անգամ չարժէ, այսինքն, դուք, պարոն, օրինակի համար ասենք, երկու կոտրած կոպէկ էլ չէք տալ, իսկ ես շատ կըտայի, եթէ ես շատ ունենայի, որ միայն այն բոլորը, ինչ որ պատահեց, չըպատահէր։ Պարոն, ես լաւ վարտիք ունէի, շատ փառաւոր վարտիք, կապոյտ վանդակաւոր, կալուածատէրը կարել տուեց ինձ, որ այստեղ յաճախ գալիս էր, բայց յետոյ հրաժարուեց վարտիքից, ասելով վարտիքը նեղ է. և այսպէս նա ձեռքումս մնաց։ Մտածում եմ՝ թանգագին իր է։ Տուկայում գուցէ հինգ ռուբլի տան, իսկ եթէ չըտան, այն ժամանակ նրանից երկու փոքր վարտիք կըկարեմ Պետերբուրգցի պարոնների համար և մնացածից էլ ինձ բաճկոն կըշինեմ։ Մեզ պէս խեղճ մարդկանց համար գիտէք, այդ էլ լաւ է։ Իսկ այդ միջոցին սիրելի Եմելիանիս համար եկաւ հասաւ շատ խիստ, տխուր ժամանակ։ Տեսնում եմ մի օր չի խում, երկրորդ օրն էլ չի

խմում, երրորդ օրն էլ օղի ասած բանը բերան չէ առնում, բոլորովին բայդուշ է կտրուել. ցաւեցի տեսնելով նրան այնպէս տխուր-տրտում։ Է՜հ մտածում եմ, դու տղայ, փող չունիս առնելու թէ արդէն Աստուած ողորմեց և խելքի եկար։ Ահաւասիկ, պարոն, այս այսպէս էր, որ այդ միջոցներին մի մեծ տօն ունեցանք. ես գնացի այդ երեկոյ ժամնախատօնակին. տուն եմ վերադառնում և ի՞նչ տեսնում, որ իմ Եմելիանը նստած է պատուհանի վրայ, հարբած օրօրւում է։ Էհէ, մտածում եմ, այդպէս ուրեմն. տղայ։ Եւ ինչ որ բանի համար բացի արկղս։ Նայեմ, ի՞նչ, վարտիքս չկայ։ Ես այս կողմ այն կողմն ընկայ, վարտիքս կորաւ ու պրծաւ։ Ի՞նչ ասեմ, երբ ամեն բան տակն ու վրայ արի և տեսայ որ չկայ, իմ սիրտս, կարծես, կտոր կտոր եղաւ։ Վազեցի պատաւի մօտ, սկզբում նրան բաւական հայհոյեցի, իսկ Եմելիայի մասին, որ հարբած նստած էր, կտակած անգամ չբտարայ։ «Զէ, ասում է ինձ իմ պառաւը, Աստուած քեզ հետ, ո՞վ մարդ, ինչին է պէտք ինձ քո վարտիքը, ես պէտք է հագնեմ, ի՞նչ է, ինձնից իսկ գողացան իւբկաս (юбка) ոչինչ չըգիտեմ և ոչինչ չեմ լսել» ասում է։— Ո՞վ էր այստեղ, ասում եմ, ո՞վ էր եկել։ «Պարոն, ոչ ոք չէ եկել, բոլոր ժամանակ ես այստեղ էի. Եմելիա Իլիչը դուրս գնաց, բայց յետոյ նորից ներս եկաւ, ահաւասիկ նա նստած է այնտեղ։ Հարց ու փորձ արա նրանից»։—Զի՞ս վերցրել արդեօք, Եմելիա, ասում եմ ես, որևէ

պատճառով, իմ նոր վարտիքս, այն, յիշում ես, որ կալուածատէրը կարել տուեց. «Ո՛չ, Աստա՛ֆի Իվանիչ, ասում է նա, ես նրան չեմ վերցրել»։

«Ի՞նչ սատանայական բան. նորից փնտրել սկսայ, փնտրեցի, փնտրեցի—չկայ ու չկայ, ոչ մի կերպ չեմ գտնում։ Իսկ Եմելիան նստած է ու օրօրւում։ Զորս թաթի վրայ նստած էի այսպէս, պարոն, արկղի վրայ, նրա առաջ, և յանկարծ աչքերս ծռեցի նրա վրայ... Էհէ, մտածում եմ, այսպէս իսկոյն սիրտս այրուեց, մինչև անգամ կարմրատակեցի։ Յանկարծ Եմելիան էլ նայեց վրաս։

«—Ո՛չ, Աստաֆի Իվանիչ, ասում է նա. ես ձեր այն վարտիքը... Դուք, գուցէ, կարծում էք, որ ես այսպէս ասել... իսկ ես նրան չեմ վեր առել։

«—Հապա ո՞ւր կարող էր կորչիլ, Եմելիան Իլիչ։

«—Ո՛չ, չըգիտեմ, ասում է, Աստաֆի Իվանիչ, չեմ տեսել բոլորովին։

«—Ուրեմն, Եմելիան Իլիչ, այնպէս պէտք է կարծել, որ վարտիքս ինքն իրան կորաւ, ի՞նչ է։

«—Ո՛վ գիտէ, կարելի է, ինքն իրան կորաւ, Աստաֆի Իվանիչ։

«Նրան լաւ հարցուփորձ անելուց յետոյ—ես վերկացայ, մօտեցայ պատուհանին, մոմ վառեցի և սկսայ կարս կարել։ Իմ տան տակը ապրող պետական պաշտօնեայի (չինովնիկ) բաճկոնակն էի վերանորոգում, իսկ իմ սիրտս այրում

խորովում էր։ Է՜հ, աւելի հեշտ կըզգայի, եթէ իմ ունեցած պահարանս կոտրէին ու նրանով վառարանս վառէին։ Ահաւասիկ Եմելիանն էլ հասկացաւ, որ սիրտս խիստ տոչորուեց։ Մարդու սիրտը, պարոն, երբ նա չարին մանակից է, դեռ հեռուից էլ զգում է դժբաղդութիւնը, ինչպէս երկնային թռչունը փոթորիկը։

«—Ա՜յ, Աստաֆի Իվանիչ, սկսեց խօսել Եմելիանը դողդոջուն ձայնով,—այսօր Անտիպ Պրոխորիչը, ֆելդշերը, նորերս վախճանած կառապանի կնոջ վրայ ամուսնացաւ...

«Իսկ ես նրան նայեցի և այնպէս խիստ նայեցի... Եմելիանը հասկացաւ։ Նայում եմ՝ վերկացաւ, մահճակալին մօտեցաւ և սկսեց ինչ որ որոնել։ Սպասում եմ—երկար որոնում է, իսկ ինքն կամաց խօսում. «չըկայ ու չըկայ, ուր կորաւ այն անպիտանը, սատանէն գիտէ»։ Սպասում եմ թէ ինչ կըլինի վերջը. տեսնեմ Եմելիան մահճակալի տակը մտաւ ձեռքերի վրայ կռացած։

«—Ի՞նչ ես, Եմելիան Իլիչ, չորս թաթի վրայ մահճակալի տակը սողում։

«—Տեսնեմ այնտեղ չէ վարտիքը, Աստաֆի Իվանիչ։ Ուզում եմ տեսնել այստեղ չի ընկել խօ նա։

«—Ի՞նչ բանըդ է, պարոն (բարկութիւնից ըսկսեցի նրան «պարոն» տիտղոսով մեծարել), ինչ բան ունիս ինձ պէս խեղճ, հասարակ մարդու համար նեղանալ, ինչ ես անմեղ տեղ ծնկներդ ցաւեցնում։

«—Ինչ կայ, Աստաֆի Իվանիչ, ես այնպէս... Գուցէ ինչպէս և իցէ գտնուի վարտիքդ, եթէ փնտրենք։

«—Հը՛մ, ասում եմ, լսիր ինձ, Եմելիան Իլիչ։

«—Ինչ ես ասում, Աստաֆի Իվանիչ, պատասխանում է նա։

«—Զըլինի թէ դուն ես նրան գողացել, իմ աղուհացը մոռացել, իբրև գող և աւազակ։ Ասել կուզեմ, որ սիրտս այնպէս պղտորուեց, երբ տեսայ, որ ծնգների վրայ սողում է իմ առաջ։

«—Ո՛չ... Աստաֆի Իվանիչ...

«Իսկ ինքն չորս թաթի վրայ, ինչպէս որ կար, այնպէս էլ սառած մնաց։ Երկար այդ դըրութեան մէջ մնաց, յետոյ դուրս եկաւ անտեղից։ Նայում եմ գունաթափուել էր, մեռելի գոյն էր ստացել։ Վերկացաւ նստեց պատուհանի վրայ կողքիս, այնպէս նստած մնաց տասը րոպէի չափ։

«—Ո՛չ, Աստաֆի Իվանիչ, և յանկարծ վեր կացաւ և վրաս եկաւ մեղքի պէս սարսափելի.

«—Ո՛չ, Աստաֆի Իվանիչ, ես քո վարտիքը չեմ վեր առել...

«Ինքը բոլոր մարմնով դողում է, դողդոջուն մատով իւր կրծքին խփում, իսկ ձայնը այնպէս դողում, որ ինքս վախեցի, պարոն, և կարծես քար կտրուեցի։

«—Դեհ, Եմելիան Իլիչ. — ինչպէս կուզէք. ներեցէք ինձ, եթէ ես յիմարաբար ի զուր տեղը զրպարտեցի քեզ։ Սատանէն տանէ, թող կորչի

վարտիքս, առանց վարտիքի էլ կապրենք։ Ձեռքեր ունենք, փառք Աստուծոյ, գողութիւն չենք անիլ... ուրիշներին ձեռք չենք մեկնիլ. մի կաղ հաց կըգտնենք...

«Խօսքերս լսելուց յետոյ, Եմելիանը երկար կանգնեց իմ առաջ, յետոյ տեսայ—նստեց։ Այսպէս ամբողջ երեկոյ նստած մնաց, մի փոքր շարժում անգամ չանելով, ես արդէն քնելու էլ գընացի, իսկ Եմելիանը միևնոյն տեղում նստած մնաց։ Առաւօտը միայն տեսնում եմ պառկած է մերկ յատակի վրայ, իւր վերարկուի տակ կուչ եկած. խիստ անպատիւ եղաւ, այնպէս որ և մահճակալի վրայ պառկելու էլ չեկաւ։ Այսպէս, պարոն, այն օրից ես նրան չըսիրեցի, այսպէս ես նրան հէնց առաջին օրերից ատեցի։ Ինձ այնպէս թուաց թէ հարազատ որդիս ինձ կողոպտեց և ծնողական մեծ ցաւ պատճառեց ինձ։ Ա՜խ, մտածում եմ, Եմելիա, Եմելիա։ Իսկ Եմելիան, պարոն, երկու շաբաթ շարունակ խմում էր, այնպէս որ բոլորովին գժուեց, խելքը կորցրեց խմելուց։ Առաւօտեան դուրս էր գնում, տուն էր գալիս ուշ գիշերը, և երկու շաբաթուայ ընթացքում մի խօսք անգամ նրա բերնից չեմ լսել։ Երևի վիշտը նրա կուրծքը մաշում էր, կամ իր անձին ինչպէս և իցէ վերջ դնել էր ուզում։ Վերջապէս դադարեց խմելուց, ունեցած չունեցածը խմեց և նորից նստել սկսեց պատուհանի վրայ։ Ցիշում եմ, երեք օր ու գիշեր նըստած ու անխօս մնաց միևնոյն տեղում. յանկարծ,

նայում եմ, լաց է լինում նա։ Այսինքն, այսպէս նստած է, պարոն, իւր տեղում և լալիս է և ինչպէ՞ս։ Այսինքն, ինչպէս ջրհորից, կարծես, ինքն չէ լսում, այնպէս է արցունքներ թափում աչքերից. ծանր է, պարոն, տեսնել, երբ հասակաւոր մարդը վշտից ցաւից լալիս է։

«—Ի՞նչ պատահեց քեզ, Եմելիա, ասում եմ ես։

«Եւ նա բոլոր մարմնով դողաց։ Վեր թռաւ։ Առաջին անգամն էի այդպիսի խօսքը նրան ասում։

«—Ոչինչ... Աստաֆի Իվանիչ։

«—Թող վարտիքս կորչի, Տէր ընդ քեզ, Եմելիա։ Ինչ ես բայդուշի պէս նստել։ Շատ խըղճացի նրան։

«—Այնպէս Աստաֆի Իվանիչ, ես չեմ... Որևէ գործ եմ ուզում գտնել, Աստաֆի Իվանիչ։

«—Ինչպիսի՞ գործ ես ուզում, Եմելիան Իլիչ։

«—Այնպէս որևէ գործ։ Գուցէ առաջուայ պաշտօնի նման որևէ մի պաշտօն կըգտնեմ։ Ես արդէն գնացի էլ խնդրելու դրա մասին Ֆեդոսէյ Իվանիչից... Լաւ չէ ձեզ նեղութիւն տալ, Աստաֆի Իվանիչ։ Ես, Աստաֆի Իվանիչ, հէնց որ, գուցէ, մի պաշտօն ճարեցի, բոլորը կըվճարեմ և բոլոր ծախքերիդ համար վարձատրութիւն կըներկայացնեմ։

«—Բաւական է, բաւական, Եմելիա, մեղքն եղաւ գնաց, հերիք է էլի։ Թող կորչի վարտիքս։ Ապրենք առաջուան պէս։

«—Չէ, Աստաֆի Իվանիչ, դուք գուցէ միշտ

այն բանի վրայ էք մտածում թէ ես եմ... իսկ ես ձեր վարձիքը չեմ վեր առել...

«—Ինչպէս ուզում ես, Տէր ընդ քեզ, սիրելի Եմելիան։

«—Չէ, Աստաֆի Իվանիչ։ Ես, ինչպէս երևում է, էլ ձեր անկեցը չեմ։ Դուք ինձ ներեցէք, Աստաֆի Իվանիչ։

«—Դէհ, Տէր ընդ քեզ, ո՞վ է քեզ, Եմելիան Իլիչ, նեղացնում, ո՞վ է քեզ տանից դուրս անում, ես, ինչ է։

«—Չէ, անվայել է ձեզ մօտ այսպէս ապրել, Աստաֆի Իվանիչ... Ես աւելի լաւ է կերթամ...

«Պէտք է ասել, որ նա շատ նեղացել էր. վիրաւորուել էր. պէտք է գնում գնում խօսքի վրայ կանգնել էր ու պրծել։ Նայում եմ նրան և ճիշտ որ, վերարկուն վրան է ձգում որ գնայ։

«—Ո՞ւր ես պատրաստւում դուն, Եմելիան Իլիչ։ Թելքի արի, ինչ եղաւ քեզ։ Ո՞ւր կերթաս։

«—Չէ, մնաք բարև, Աստաֆի Իվանիչ. էլ մի՛ք բռնիլ ինձ (ինքն նորից հեծկլտում է), ես արդէն մեղքից կըհեռանամ, Աստաֆի Իվանիչ։ Դուք արդէն էլ այն չէք հիմա։

«—Ինչպէ՞ս թէ էլ այնպէս չեմ։ Այնպէս եմ։ Բայց դուն ինչպէս մի փոքր, անմիտ մանուկ կըկորչես մենակ, Եմելիան Իլիչ։

«—Չէ, Աստաֆի Իվանիչ, երբ դուրս գնաք, արկղը հիմա կողպեցէք, իսկ ես, Աստաֆի Իվանիչ, տեսնում եմ և լալիս... Չէ, աւելի լաւ է ինձ թողնէք, Աստաֆի Իվանիչ, և ներեցէք այն

բոլոր բանի համար, ինչ բանում որ նեղութիւն տուի իմ անկեցութեան միջոցին։

«Եւ ինչ, պարոն։ Ճիշտ որ գնաց մարդը։ Սպասում եմ մի օր, անա, մտածում եմ կըվերադառնայ երեկոյեան—չէ։ Երկրորդ օրն էլ չըկայ, երրորդն էլ—նոյնպէս չըկայ։ Վախեցայ ես, կսկիծը ինձ շուր ու մուր է տալիս, չեմ խմում, չեմ ուտում, չեմ քնում։ Բոլորովին յուսահատացրեց ինձ մարդը։ Չորրորդ օրը գնացի նրան որոնելու. բոլոր օդեանները պատեցի, հարցրեցի—չէ, կորաւ Եմելիանուշկաս ու պրծաւ։ «Արդէն չըկերար գիժ գլուխդ Եմելիան, մտածում եմ ես»։ «Գուցէ որևէ տան պատնէշի մօտ հոգին փչեցիր հարբած վիճակում և հիմա ինչպէս փթած գերան պառկած ես»։ Կիսակենդան տուն վերադարձայ։ Երկրորդ օրն էլ նրան որոնել մտադրուեցայ։ Եւ ինքս ինձ անիծեցի, թէ ինչու թոյլ տուի որ խելառ մարդը հեռանար ինձանից ուր ուզէր։ Միայն նայեմ տեսնեմ ինչ. դեռ արշալոյսը չըբացուած, հինգերորդ օրը (տօն էր) դուռս ճռճռում է։ Տեսնում եմ ներս է մտնում Եմելիան՝ կապտած, մազերը ցեխոտ, որ կարծես թէ փողոցումն էր քնել, մոմի պէս հալուել, նիհարել, հանեց վերարկուն, նստեց ինձ մօտ արկղի վրայ, և վրաս նայում։ Ուրախացայ ես և առաջուանից աւելի սրտիս կսկիծը աւելացաւ։ Պարոն, տեսէք ինչ է դուրս գալիս, եթէ ինձ հետ պատահէր այդպիսի մի մեղք մարդկային, ճշմարիտ եմ ասում, շան պէս սատկել աւելի

լաւ կրհամարէի, քան այնպէս գալը։ Իսկ Եմելիանն եկաւ։ Դեհ, բնական է, որ ծանր է տեսնել մարդուն այդպիսի վիճակում։ Սկսեցի նրան փայփայել, մխիթարել։ Ա՛յ, ասում եմ, իմ սիրելի Եմելիան, ուրախ եմ որ տուն վերադարձար։ Եթէ մի փոքր էլ ուշանայիր գալ, այսօր էլ պէտք է պատէի օղատները և գինետները քեզ գտնելու։ Կերթ՞ել ես արդեօք որևէ բան.

«—Կերել եմ, Աստաֆի Իվանիչ։

«—Ճի՞շտ է, կերթ՞ել ես։ Ա՛յ, եղբայր, երեկուան շշից քիչ մնացել է, նա մսով էր եփուած, հասարակը չէր. այ և սոխ ու հաց։ Կեր, ասում եմ, ֆլաս չի տալ։

«Մատուցի ես նրան ինչ որ կար. էհ և տեսայ, որ երեք օր, գուցէ, կերած չէր այնպիսի ախորժակով էր խժրում կերակուրը։ Այս, նշանակում է, ինչպէս հասկացայ, քաղցն էր նրան ինձ մօտ ձգել։ Փայփայել սկսայ այդ խեղճին նայելուց։ Մտածեցի՝ արի գնամ օղետունը, բերեմ օղի, որ սիրտն հովացնէ, և սրանով էլ կը-վերջացնեմ, արդէն հերիք է։ Այլ ևս չար չեմ դէպի քեզ, սիրելի Եմելիան։ Բերեցի օղին։ Ա՛յ, ասում եմ, Եմելիա Իլիչ, խմենք, այսօր, տօն է։ Կուզե՞ս խմել։ Խմելը առողջութիւն է։

«Ձեռքը արդէն պարզել էր դէպի բաժակը, ագահութեամբ պարզել, արդէն բռնել էր նրան, որ յետոյ ձեռքը յետ տարաւ. սպասեց մի փոքր, տենեմ, նորից բռնեց բաժակը, տարաւ դէպի բերանը, բայց օղին թեւի վրայ թափեց, բայց չէ,

վերջը տարաւ բերանը, բայց խկոցն և եթ դրաւ սեղանի վրայ։

«—Ի՞նչ է, սիրելի Եմելիան։

«—Ոչինչ, ես ուզում էի, Աստաֆի Իվանիչ։

«—Ձե՞ս ուզում խմել ի՞նչ է։

«—Ես, Աստաֆի Իվանիչ, ուզում եմ ասել... այսուհետև այլ ևս չեմ խմիլ, Աստաֆի Իվանիչ։

«—Ի՞նչ, դու բոլորովին ես ուզում դադարել խմելուց, սիրելի Եմելիան, թէ՞ միայն այսօր։

«Լռեց նա։ Տեսնեմ մի բոպէից յետոյ ձեռքը գլխին դրեց։

«—Ի՞նչ է, ի՞նչ պատահեց, հիւանդ խո՞ չես, Եմելիա։

«—Այնպէս. ինչ որ հիւանդ եմ զգում ինձ, Աստաֆի Իվանիչ։

«Բարձրացրի նրան և պառկեցրի անկողնում։ Նայեմ, իրաւ, դրութիւնը վատ է. գլուխը այրւում էր և տենդը բռնել էր։ Մի օր նստած մնացի նրա մօտը. գիշերը դրութիւնը վատացաւ։ Ես նրա համար կվասի մէջ իւղն ու սոխը խառնեցի, հացն էլ մէջը բռթեցի։ Դեհ, ասում եմ, կեր, լաւ բան է, բողոծօ է (тюри), գուցէ, լաւ դառնաս։ Գլուխը շարժում է։ «Չէ, ասում է, այսօր էլ չեմ ճաշիլ, Աստաֆի Իվանիչ»։ Թէյ պատրաստեցի նրա համար, խեղճ պառաւին նեղութիւն տուի։ Դեհ, ասում եմ, բանը վատ է։ Երրորդ առաւօտը ես գնացի բժշկի մօտ։ Մօտիկ ապրում էր ինձ ծանօթ բժիշկ Կոստոպրավովը (Ոսկորդրստեանցը)։ Դեռ առաջ, երբ ես դեռ

Բօսօմեա գլին պարոնների մօտ ծառայում էի, ծանօթացել էինք իրար. նա ինձ բժշկում էր։ Եկաւ բժիշկը, նայեց։—Չէ, ասում է, բանը վատ է։ Ի զուր էք իմ յետևից մարդ ուղարկել։ Ցամենայն դէպս, փոշի դեղ տուեցէք։ Բայց փոշի դեղը չըտուեցի. մտածեցի որ բժիշկը կատակ է անում, մինչդեռ եկաւ հասաւ հինգերորդ օրը։

«Պառկած էր նա ինձ մօտ, պարոն, և իմ առաջ էլ հոգին աւանդեց։ Իր պատուհանի վրայ էի նստել, ձեռքիս գործ էի բռնել։ Պառաւը վառարան էր վառում։ Ամենքս լուռ ենք։ Պարոն, սիրտս կսկիծից տոչորւում է այս թշուառականի համար կարծես հարազատ զաւակս եմ թաղում։ Գիտեմ, որ Եմելիան հիմա ինձ է նայում, դեռ առաւօտուանից տեսայ, որ մարդը ճիգ է թափում, ուզում է ինչ որ ասել, բայց միայն, ինչպէս երևում է, չէ համարձակւում։ Վերջապէս նայեցի վրան, նկատում եմ թշուառականի աչքերում այնպիսի մի թախիծ, աչքը ինձնից չի հեռացնում, իսկ երբ տեսաւ, որ ես նայում էի նրան, իսկոյն աչքերը խոնարհացրեց.

«—Աստաֆի Իվանիչ։

«—Ի՞նչ է սիրելի Եմելիան։

«—Ա՛յ, եթէ օրինակի համար իմ վերարկուն բազար տանէիր շատ կըտային արդեօք նրա համար, Աստաֆի Իվանիչ։

«—Է՜հ, ասում եմ, յայտնի չէ թէ ինչ կըտային։ Գուցէ 3 րուբլի տային, Եմելիան Իլիչ։

«Իսկ իրօք եթէ փորձէիր տանէիր, ոչինչ չէին տալ, այլ մի կուշտ էլ վրադ կըծիծաղէին նրա համար, որ այդպիսի անպիտան ցնցոտիք ես վաճառում։ Միայն նրան, այս Աստուծոյ մարդուն, նրա պարզամիտ բնաւորութիւնը ճանաչելով, նրան մխիթարելու մտքով էի ասել։

«—Իսկ ես կարծեցի, Աստաֆի Իվանիչ, որ 3 ռուբլի կորոշէին, հա մահուդից է, Աստաֆի Իվանիչ. ինչպէս կարելի է որ 3 րուբլի, քանի որ նա մահուդից է։

«—Չեմ իմանում, Եմելիան Իլիչ, բայց միայն երբ ծախել ես ուզում, այդպէս իհարկէ հէնց առաջին անգամից 3 րուբլի պէտք է պահանջել։

«Մի փոքր լռեց Եմելիան. յետոյ նորից կանչեց։

«—Աստաֆի Իվանիչ։

«—Ի՞նչ է, սիրելի Եմելիան, հարցնում եմ ես։

«—Դուք ծախեցէք վերարկուս, երբ մեռնեմ, իսկ ինձ նրանում չըթաղեք։ Ես այնպէս էլ կըպառկեմ. իսկ նա արժէքաւոր իր է, գուցէ նա ձեզ պէտք լինի։

«Այստեղ սիրտս այնպէս կտրտուեց, որ անկարելի է ասել։ Տեսնում եմ որ մահուան թախիծը նրան մօտենում է։ Դարձեալ լռեցինք։ Այսպէս անեց մի ժամ։ Նորից նայեցի վրան. անընդհատ ինձ է նայում, իսկ երբ նրա աչքերը իմ աչքերին հանդիպեցին, նորից գլուխը կախեց։

«—Չէք կամենում, Եմելիան Իլիչ, ջուր խմել։

«—Տուէք, Տէր ընդ քեզ, Աստաֆի Իվանիչ։

«Տուի նրան ջուր։ Խմեց.—Շնորհակալ եմ, Աստաֆի Իվանիչ, ասաց նա։

«—Էլ ուրիշ բան չեմ ուզում, սիրելի Եմելիան։

«—Չէ, Աստաֆի Իվանիչ. ոչինչ պէտք չէ. իսկ ես այն եմ ուզում...

« Ի՞նչ։

«—Այն...

«—Ի՞նչ այն, սիրելի Եմելիան։

«—Վարտիքդ, այն, որ... ես այն ժամանակ վեր առի ձեզանից... Աստաֆի Իվանիչ։

«—Դէհ, Աստուած թողութիւն անէ քեզ, դու թշուառական, այս ինչ, այն ինչ մարդ։ Մեռիր հանդիստ... Իսկ ինքս չըկարողացայ համբերել. արտասուքները ինձ խեղդեցին. մի բոպէ աչքս հեռացրի նրանից։

«—Աստաֆի Իվանիչ։

«Նայում եմ տեսնում, որ Եմելիան ինչ որ ուզում է ասել, ինքն վեր է կենում, շրթունքներով ինչ որ շշնջում է... Ցանկարծ նա բոլորովին կարմրեց, վրաս նայեց... Ցանկարծ տեսնում եմ նորից գունատփւում է, մի ակնթարթում վայր ընկաւ, գլուխը յետ ձգեց, մի անգամ էլ հոգւոց հանեց, և իսկոյն էլ հոգին աւանդեց. . . . . .

. . . . . .

Հայաստանի Ազգային գրադարան
NL0438330